ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

«23» հունիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Խորեն Պետրոսյանը:

1. Տեղեկատվություն՝ ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի կողմից 2022թ. հունիսի 22-ին ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացված գրության և 2-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգի հետագա ընթացքը կազմակերպելու վերաբերյալ.

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարված ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ին 2022թ. հունիսի 16-ին էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

2022թ. հունիսի 22-ին ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ից ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացվել է գրություն (կցվում է), որով վերջինս հայտնել է, որ ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող կնքել ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-2 ծածկագրով պայմանագիրը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, գնման ընթացակարգի հետագա ընթացքը կազմակերպելու նպատակով գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված գրության արդյունքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ _____ Խորեն Պետրոսյան

Անդամներ՝

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան

« Դատական դեպարտամենտ »-ի ղեկավար Արմեն Հարությունյանին

Հարգելի Ա. Հարությունյան

« ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ »-ն հայտնում է Ձեզ,որ ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող կնքել **ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-2** ծածկագրով պայմանագիրը:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը:

« ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ » տնօրեն՝ Ա. Մկրտչյան 22.06.2022թ.

Digitally signed by MKRTCHYAN ARTASHES 1414900430
Date: 2022.06.22 15:26:47 AMST

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«01» հուլիսի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Խորեն Պետրոսյանը:

Տեղեկատվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված գրության և ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

Դատական դեպարտամենտի 23/06/2022թ. թիվ ԴԴ-1-Ե-5181 ԴԴ/310-22 գրության (կցվում է) վերաբերյալ 30/06/2022թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է թիվ 01/26/11564-2022 գրությունը (կցվում է):

Հանձնաժողովը ուսումնասիրեց ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված գրությունը և որոշեց.

- հիմք ընդունելով «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.21-րդ կետի պահանջը՝ ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա,

- հաստատել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ _____ Խորեն Պետրոսյան

Անդամներ՝

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511 771

N ԴԴ-1-Ե-5181 ՅՅ/310-22
«23» հունիսի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ադիլխանյան,

Ուղարկվում է ձայնագրառման համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ կազմված «ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Առդիր՝ 3 էջ:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

..... հուլիսի 2022 թվականի N - Ն

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ կետի պահանջը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Դատական դեպարտամենտին 2022 թվականի ապրիլի 27-ին հրապարակված N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ձեռքբերվող ձայնագրառման համակարգի համար մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ և 42-րդ կետերի պահանջը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գնման գործընթաց կազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

I. Ընթացիկ իրավիճակը, խնդիրները և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Դատական դեպարտամենտի 2022թ. կարիքների բավարարման նպատակով՝ <Ֆեմիդա> ձայնագրառման համակարգի ձեռքբերման նպատակով 2022թ. ապրիլի 4-ին թիվ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/16 ծածկագրերով իրականացվել է գնման գործընթաց, որի արդյունքում <Ջուզեպպե> ՍՊԸ-ի կողմից ստացվել է նվազագույն գնային առաջարկ սակայն հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, որի հիման վրա պահանջվել է վերջինիցս շտկում այնինչ շտկում չի ներկայացվել և ընթացակարգը համարվել է չկայացած: Նշվածով պայմանավորված սույն թվականի ապրիլի 27-ին թիվ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրերով իրականացվել նորից գնման գործընթաց, որի արդյունքում «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է նվազագույն գնային առաջարկ: «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից և վերջինիս ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը: «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի հունիսի 22-ին ներկայացվել է գրություն, որով վերջինս հայտնել է, որ ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող կնքել ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 2 ծածկագրով պայմանագիրը:

Նշվածով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ եթե առաջին տեղը գրաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են, այսինքն ընթացակարգը պետք է համարել չկայացած:

Առաջարկվող կարգավորման նպատակը և բնույթը.

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Նախագծով առաջարկվում է, որ 2022 թվականի ապրիլի 27-ին հրապարակված N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ձեռքբերվող ձայնագրառման համակարգի համար մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատումն իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ և 42-րդ կետերի

պահանջներին համապատասխան՝ այն է՝ եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

2. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում Դատական դեպարտամենտը հնարավորություն կունենա ձեռք բերել <Ֆեմիդա> ձայնագրառման համակարգը՝ ապահովելով դատարանների բնականոն գործունեությունը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Դատական դեպարտամենտի կողմից:

4.Նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների նվազեցման կամ ավելացման մասին.

Նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում լրացուցիչ ծախսեր չի առաջացնում:

5. Տեղեկատվություն՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Նախագծի ընդունմամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

7. Նախագծի կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

«Գնման գործընթաց կազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի բխում որևէ ռազմավարական փաստաթղթից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 002

№ 01/26/11564-2022

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻՆ

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ՆԱԽԱՐԱՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N Ա-9893
ԱՄՍԱԹԻՎ 30.06.22

Հարգելի պարոն Ջհանգիրյան

Ուսումնասիրելով Ձեր 23/06/2022թ. թիվ ԴԴ/310-22 գրությամբ ներկայացված ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ հայտնում ենք հետևյալը.

Նախագծով նախատեսվում է թույլատրել դատական դեպարտամենտին 27/04/2022թ. հայտարարված ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ձեռքբերվող ձայնագրառման համակարգի համար մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատումն իրականացնել ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերի պահանջներին համապատասխան՝ չկիրառելով ՀՀ կառավարության 18/05/2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ՝

- ՀՀ կառավարության 18/05/2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած.

- գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնահատող հանձնաժողովի 17/05/2022թ. նիստի N 4 արձանագրության համաձայն՝ վերոհիշյալ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել 2 ընկերություն, որոնցից «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 360.0 մլն ՀՀ դրամ, իսկ «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ինը՝ 397.8 մլն ՀՀ դրամ: Ընդ որում՝ էլեկտրոնային հակադարձ աճուրդում վերջիններիս կողմից գնային առաջարկի նվազեցում չի կատարվել: Նույն հանձնաժողովի 25/05/2022թ. նիստի N 7 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից, իսկ «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք խմբագրել նախագիծը, նախատեսելով, որ պատվիրատուն ընթացակարգը կազմակերպում է ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի կիրառմամբ, մասնակիցների հայտերի գնահատման և համեմատման համար հիմք ընդունելով «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը: Եթե ստացվում են բարձր կամ հավասար գնային առաջարկներ, ապա պատվիրատուն ապրանքների ձեռք բերումն իրականացնում է «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ից, հակառակ դեպքում պայմանագիր կնքվում է նոր ընթացակարգի արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ:

Միաժամանակ առաջարկում ենք նշված եղանակով գնման ընթացակարգը նախատեսնել նախագծի՝ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելուն զուգահեռ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN TIGRAN 2112700065

Կատարող՝ Լ. Ավետիսյան
Հեռ. 011800331

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
2	Ձայնագրառման համակարգեր	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի **4-րդ կետի**	«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարված ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ին 2022թ. հունիսի 16-ին էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը: 2022թ. հունիսի 22-ին ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ից ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացվել է գրություն, որով վերջինս հայտնել է, որ ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող կնքել ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-2 ծածկագրով

				պայմանագիրը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**: